Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության և «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերության միջև 01.03.2023թ. կնքված «ՀՀ Ո ԷԱՃԾՁԲ-ՃՈ 2023/Գ/ԷԼՌԵԳ» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի կողմից միակողմանի լուծելու մասին 20.09.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի 02.10.2023թ. «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը, համարել լուծված:

Դատարանի 20.10.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**